

ԻՐԱՎԱԿԱՆ ԴՈԿՏՐԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ.
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ*

Անի Սարգսյան

Բանալի բառեր՝ իրավունքի աղբյուր, իրավական դոկտրին, գիտական մեկնաբանում, իրավաբան-գիտնականներ:

Իրավական դոկտրինն առանձնահատուկ տեղ է գրավում իրավունքի աղբյուրների շարքում: Հատկապես վերջին ժամանակաշրջանում այն եղել է բազմաթիվ իրավագետների ուշադրության կենտրոնում, ովքեր մի շարք խնդիրներ են առաջադրել իրավական դոկտրինի՝ որպես իրավունքի աղբյուրի դերի, նշանակության և իրավունքի այլ աղբյուրների հետ հարաբերակցության վերաբերյալ: Չնայած այդ հանգամանքին՝ իրավաբանական գրականությունում մինչ այժմ չկա միասնական մոտեցում վերոնշյալ հարցերի վերաբերյալ: Իրավունքի աղբյուրների ուսումնասիրությունը չափազանց կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի ոչ միայն այն պատճառով, որ կարգավորում և արտահայտում է իրավունքի էությունը և բովանդակությունը, այլ նաև իրավական շատ գործոններ կախված են հենց իրենց առանձնահատկություններից՝ համապարտադիրություն, նորմատիվություն, իրավական ակտերի իրավաբանական ուժի աստիճան, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մեթոդներ և միջոցներ և այլն: Իրավունքի աղբյուրների բազմազանության միջոցով տրվում է «իրավունքի աղբյուրի» ընդհանուր հասկացությունը, որի հիման վրա հնարավոր է դառնում բացահայտել դրա յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները և նպատակները: Մ.Ն. Մարչենկոն, մեջբերելով մի շարք իրավաբան-գիտնականների կարծիքները, նշում է, որ. «Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր գիտնականները հավասարապես հասկանում են իրավունքի աղբյուրները որպես «իրավունք ստեղծող գործոններ», սակայն «տարածայնությունները սկսվում են հենց այն պահից, երբ որոշվում է, թե ինչը պետք է համարել իրավաստեղծ գործոն» [1]: Այս խնդիրը առկա է նաև իրավական դոկտրինը իրավունքի աղբյուր ճանաչելու գործում [2]:

«Դոկտրինը» առաջացել է լատիներեն «doctrina» բառից, որը նշանակում է տեսություն, հիմնական դրույթ («docere» բայից՝ «սովորեցնել», ինչպես նաև «doctus, doctor» բառերից՝ «գիտնական») [3]: «Դոկտրին» բառի ստուգաբանական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել դրա երկու հիմնական նշանակությունները՝ դոկտրինը որպես տեսություն, տեքստ, և դոկտրինը՝ որպես գիտնականների կողմից ընդունված գաղափարների ամբողջություն: Փլիխտոփայական տեսանկյունից նույնպես դոկտրինն ընկալվում է որպես ուսուցում, փլիխտոփայական կամ գիտական տեսություն, պատկերացումների, հայացքների, բնության, հասարակության և մարդու մասին սկզբունքների համակարգ: Ա.Ա. Վասիլևը, համադրելով այս ամենը, ներկայացրել է իրավական դոկտրինը հետևյալ կերպ.

1. Իրավական դոկտրինը ներկայացնում է իրավաբանական գիտությունը կամ իրավունքի մասին գիտելիքի առանձին ոլորտներ: Այս իմաստով իրավական դոկտրինն իրավունքի, իրավական երևույթների մասին գիտելիքների, տեսությունների, գաղափարների, հասկացությունների, դատողությունների ամբողջությունն է:

2. Իրավական դոկտրինն առկա կամ ինչ-որ ժամանակ գոյություն ունեցած իրավունքի կամ կատարյալ կարգունակունի մասին ուսմունք է, որը ներառում է անցյալի և

* Հոդվածն ընդունվել է 14.09.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ի.գ.թ. Ա. Եսայանը: 20.09.21:

ժամանակակից մտածողների տեսակետներն իրավունքի մասին:

3. Իրավական դոկտրինն են համարվում տվյալ հասարակությունում իրավունքի, նրա դերի և արժեքի մասին գերիշխող պատկերացումները [4]:

Հայրենական իրավաբանական գրականությունում իրավական դոկտրինի՝ իրավունքի աղբյուր հանդիսանալու խնդիրը նույնպես լիարժեք ուսումնասիրման չի ենթարկվել: Ինչպես նշում են Ա. Ղամբարյանը և Լ. Ղալլաթյանը՝ արդի իրավական համակարգում իրավական դոկտրինի դերակատարության հարցը կրում է վիճահարույց բնույթ և, համաձայնվելով Վասիլևի հետ, պայմանականորեն ներկայացվում է 3 հիմնական մոտեցումով:

1. Առաջին մոտեցման կողմնակիցներն ընդհանրապես համարում են, որ իրավական դոկտրինը չի կարող լինել իրավունքի աղբյուր՝ պատճառաբանելով, որ այն գրկված է որոշակիության և միանշանակության, որևէ խնդրին միասնական մոտեցման հատկանիշից:

2. Երկրորդ մոտեցման կողմնակիցները համարում են իրավական դոկտրինն իրավունքի «ոչ ավանդական», «օժանդակ» և «ոչ տիպային աղբյուր»՝ ընդունելով իրավական դոկտրինի օգտակար դերակատարությունը հասարակական հարաբերությունների կարգավորման ոլորտում:

3. Երրորդ մոտեցման կողմնակիցներն ընդունում են իրավական դոկտրինը որպես իրավունքի լիիրավ աղբյուր ինչպես իրավաստեղծ գործունեության, այնպես էլ իրավունքն իրացնելու գործում [5]:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, «իրավական համակարգում իրավական դոկտրինի դերը մնում է անորոշ և հակասական» [6]:

Առաջին մոտեցման կողմնակիցներից է Ն.Մ. Կորկունովը, ով հետևում է հին հռոմեական իրավաբանների այն կանոնին, ըստ որի՝ «երբ օրենքը հստակ չէ, օրենք չկա» (*Ubi jus incertum, ibi onus*) [7]:

Կարծում ենք՝ երկրորդ մոտեցման կողմնակիցների շարքին կարելի է դասել այն գիտնականներին, ովքեր դիտարկում են դոկտրինը որպես մեկնաբանման «արդյունք»: Այսպես՝ Տ.Ն. Ռադկոն տալիս է իրավունքի աղբյուրների հատկանիշները և նրանց շարքին դասում սովորույթը, նախադեպը, նորմատիվ ակտը, նորմատիվ պայմանագիրը և դատական պրակտիկան, իսկ իրավունքի ձևերի հասկացությունը տալիս թվարկում է նաև «ոչ հիմնական» աղբյուրները՝ իրավական դոկտրինները, իրավունքի սկզբունքները, իրավական պրակտիկան [8]:

Նման դիրքորոշում ունի նաև Տ.Վ. Կաշանինան, ով «ոչ պաշտոնական» մեկնաբանման տեսակների շարքին է դասում նաև դոկտրինայ մեկնաբանումը կամ, այլ կերպ, «գիտական մեկնաբանումը» և նշում է դրան բնորոշ հատկանիշները.

- դոկտրինայ մեկնաբանումն առանձնանում է իր խորությամբ,
- նրան բնորոշ է համակարգվածությունը,
- ունի բարձր հեղինակություն,
- այն բազմիցս կիրառվում է պրակտիկ աշխատողների կողմից,
- նրա արդյունքները տեղ են գտնում մենագրություններում, հոդվածներում, դասագրքերում, մեկնաբանություններում, հուշագրերում, փորձագիտական եզրակացություններում, օրենսդրական նախաձեռնություններում և այլ գրավոր փաստաթղթերում:

Ի հավելումն Կաշանինան նշում է, որ «ոչ պաշտոնական» մեկնաբանությունն ունի տեղեկատվական բնույթ [9]: Իսկ Վ.Ն. Խրոպանյուկը թվարկում է դոկտրինայ մեկնաբանման սուբյեկտները՝ հատուկ գիտա-հետազոտական հաստատություններ, որակավորված գիտնական-իրավաբաններ, փորձառու պրակտիկ-իրավաբաններ: Դոկտրինայ մեկնաբանումն ապահովում է իրավունքի նորմերի ճշգրիտ և միասնական ընկալումը և կիրառումը [10]:

Վասիլևի աշխատությունում նշվում են երրորդ մոտեցման կողմնակիցները (Վ.Վ. Սորոկին, Ս.Վ. Բոչնո, Լ.Ի. Պետրաժիցկի և այլք) [11]: Նրանց կարծիքով՝ դոկտրինն իրավունքի աղբյուրների շարքում առաջնայինն է և գլխավորը, որին համապատասխանում են և պետք է համապատասխանեն անգամ սահմանադրությունները և օրենքները: Ընդհանրապես, իրավունքի աղբյուրները դարձնում են իրավունքն առավել կայուն, ինչն ապահովում է կարգուկանոն հասարակական կյանքում: Դրանք միջոց են, որոնք ծառայում են իրավունքի բովանդակության համակարգմանը, սահմանում են իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի կարգավիճակը: Աղբյուրները դարձնում են իրավունքը մատչելի և հասու այդ սուբյեկտների համար, ում կողմից իրավունքը սկսում է ենթարկվել գիտական ճանաչման և ուսումնասիրման, ինչը հնարավորություն է տալիս այն առավել զարգացնել և համապատասխանեցնել ժամանակի և հասարակության պահանջներին և այլն: Այս հատկանիշները, կարծում ենք, ակնհայտ է դարձնում իրավական դոկտրինի՝ իրավունքի աղբյուր հանդիսանալու փաստը: Ըստ էության.

1. Իրավական դոկտրինը իրավունքի մասին ուսմունքների, հայացքների, պատկերացումների ամբողջություն է, իրավական կազուսների լուծման միջոց:

2. Իրավական դոկտրինի անհրաժեշտությունը կարևորվում է հասարակական պահանջների բավարարման և կայունության ապահովման գործում:

3. Այն, հանդիսանալով իրավունքի չգրված աղբյուր, իր արտացոլանքն է գտնում գրավոր մեկնաբանություններում, դասագրքերում և անգամ բանավոր խոսքում՝ դատարանում գիտնականների կողմից կարծիք արտահայտելիս:

4. Իրավական դոկտրինը ստեղծվում է իրավաբան-գիտնականների կողմից, ովքեր իրականացնում են բազմաթիվ ուսումնասիրություններ՝ ուղղված իրավական երևույթների էության ընկալմանը, իրավունքի պրակտիկ զարգացմանը:

5. Իրավական դոկտրինը վերջնականապես իրավունքի աղբյուրի է վերածվում՝ իրավակիրառ մարմնի կողմից պաշտոնապես նորմատիվ-իրավական ակտերում պարտադիր ճանաչվելով: Պարտադիր ճանաչված չլինելու հանգամանքը չի արգելում իրավունքի սուբյեկտների կողմից դոկտրինի դե ֆակտո կիրառումը (ինչպես օրինակ ՀՀ-ում):

Իհարկե, վերոնշյալ հատկանիշները հիմք չեն տալիս բացարձակապես ժխտելու մյուս մոտեցումների կողմնակիցներին: Ինչ խոսք, չենք կարող չհամաձայնվել Կորկունովի հետ, որ իրավական դոկտրինը զրկված է հայացքների միասնականությունից, բայց միևնույն ժամանակ հենց այդ «ոչ միասնական» մոտեցումն է հիմք հանդիսացել իրավունքի զարգացման, իրավական հայեցակարգերի, համակարգերի ձևավորման համար: Միանշանակ համաձայն ենք Ռ. Դավիթի այն կարծիքի հետ, որ իրավական դոկտրինի դերն ի հայտ է գալիս այնպես, որ հենց դոկտրինն է ստեղծում իրավական հասկացությունները, որոնցից օգտվում է օրենսդիրը [12]: Դոկտրինն է ձևավորում այն մեթոդները, որոնք «բացում են» իրավունքը և թույլ տալիս ուսումնասիրել այն: Եվ, վերջապես, հենց դոկտրինն է վճռորոշ ազդեցություն թողնում օրենսդրի վրա, ով առավել հաճախ արտահայտում է հենց դոկտրինում առկա միտումները: Ի վերջո, դոկտրինում նշված առաջարկներն արտացոլվում են նորմատիվ-իրավական ակտերում: Իրավունքի զարգացմանը զուգահեռ ավելանում են նաև հասարակական նոր պահանջմունքները, որոնք ենթակա են բավարարման: Հենց այդ պատճառով այդ ակտերը ենթարկվում են նոր ուսումնասիրման, մեկնաբանվում են նորմերը, որի միջոցով վեր են հանվում լուծման ենթակա խնդիրները և տրվում առաջարկներ, որոնք հետագայում սկսում են կիրառվել պրակտիկայում և իրենց տեղն են գտնում նոր նորմատիվ ակտերում: Եվ այս շղթան շարունակվում է իրավունքի զարգացման ողջ ընթացքում: Հետևաբար՝ չենք կարող չհամաձայնվել նաև երկրորդ մոտեցման կողմնակիցների հետ, սակայն պարզապես ավելացնենք, որ այն արտահայտում է իրավական դոկտրինի էությունն առավել նեղ՝ անհատական-կիրառական իմաստով:

Իրավական դոկտորինն առանձնանում է իրավունքի մյուս աղբյուրներից իր ձկունությամբ: Կարելի է ենթադրել, որ դոկտորինը լիովին անկախ իրավունքի աղբյուր չէ, քանի որ այն հանդես է գալիս բոլոր իրավական երևույթների հիմքում: Այսպես, ընդունվելով օրենսդրի կողմից՝ այն կարող է արտացոլվել նորմատիվ իրավական ակտերում, այն կարող է կիրառվել իրավաբանների կողմից դատական պրակտիկայում, վերածվել գաղափարախոսության հիմքի և այլն: Այսինքն՝ իրավունքի մյուս աղբյուրները հանդես են գալիս որպես «ծածկույթ, վահանակ», որտեղ դոկտորինն իր տեղն է գտնում: Ընդունելով դոկտորինը՝ նրանք հստակեցնում են նրա կարգավիճակը՝ տալով վերջինիս վարքագծի որոշակի համապարտադիր կանոնների բնույթ: Սա հիմք է հանդիսացել որոշ գիտնականների համար ընկալել դոկտորինը՝ որպես իրավունքի «ոչ ինքնուրույն, կախյալ, ոչ ավանդական» աղբյուր: Չհամաձայնվելով այս կարծիքի հետ՝ նշենք, որ սա պարզապես դոկտորինի կարգավորիչ գործառնություն է, ինչն էլ հենց պատճառ է հանդիսանում առանձնացնել իրավական դոկտորինը՝ որպես իրավունքի անկախ և առաջնային աղբյուր:

Այսպիսով, որպես իրավական դոկտորինի արտահայտման ձևեր են հանդես գալիս՝

1. իրավունքի սկզբունքները՝ որպես հիմնական գաղափարներ, որոնք արտահայտում են իրավունքի էությունը և նպատակները,
2. դոկտորինալ մեկնաբանումը,
3. իրավական հասկացությունների և կատեգորիաների սահմանումները,
4. իրավական կառույցները, որոնք արտացոլում են իրավական հարցերի կազմակերպման օրինաչափությունները, տրամաբանությունը (իրավունքի նորմի կառուցվածքը, իրավախախտման կազմը և այլն),
5. իրավական կոլիզիաների լուծման կանոնները,
6. իրավաբանական տեխնիկան (իրավական ակտերի կազմման և ձևավորման կանոնները և մեթոդները),
7. իրավաբանական դոգմաները և այլն [13]:

Իրավական դոկտորինը կարելի է դասակարգել տարբեր հիմքերով: Նախ՝ իրավական դոկտորինը կարող է ընկալվել երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով դոկտորինն իրավունքի առաջնային աղբյուր է, որն ընկած է բոլոր իրավական երևույթների հիմքում: Նեղ իմաստով դոկտորինն ընկալվում է որպես մեկնաբանման գիտական դոկտորինալ տեսակ, որը ձևավորվել է իրավագիտության ոլորտում գիտնականների և պրակտիկ աշխատողների կողմից:

Ըստ արտահայտման ձևի դոկտորինը լինում է գրված և չգրված: Չգրված իրավական դոկտորիններն իրավունքի մասին այն տեսություններն են, ուսմունքները, որոնք արտահայտված չեն գրավոր կերպով, սակայն առկա են հասարակական իրավագիտակցությունում և բանավոր փոխանցվում են իրավաբանների մի սերնդից մյուսին (չգրված դոկտորինները որոշակի ժամանակահատված կիրառվում էին Հին Հռոմում): Գրված իրավական դոկտորիններն իրենց արտահայտությունն են գտել իրավաբան-գիտնականների աշխատություններում՝ մենագրություններում, դասագրքերում, մեկնաբանություններում և այլն:

Ըստ սուբյեկտային կազմի դոկտորինը լինում է՝ անհատականացված, երբ որպես հեղինակ հանդես է գալիս կոնկրետ իրավաբան-գիտնական, և կոլեկտիվ կամ խմբային, երբ որպես հեղինակ հանդես է գալիս համակարծիք իրավաբան-գիտնականների խումբ կամ սերունդ:

Ըստ իրավաբանական ուժի՝ իրավական դոկտորինը դասակարգվում է.

1. դոկտորիններ, որոնք սանկցավորված են օրենսդրի կողմից և պարտադիր են իրավունքի սուբյեկտների համար,
 2. դոկտորիններ, որոնք պարտադիր չեն և կրում են խորհրդատվական բնույթ:
- Ըստ բովանդակության՝ իրավական դոկտորինները դասակարգում ենք.

1. դոկտորիններ, որտեղ վերադարձվում է իրավունքի մյուս աղբյուրների բովանդակությունը,

2. դոկտորիններ, որոնք հանդես են գալիս ինքնուրույն և ունեն կարգավորիչ բնույթ: Ըստ պրակտիկայում արտահայտման ձևի դոկտորինները դասակարգվում են.

1. իրավաբան-գիտնականների կողմից ներկայացված և պետական իշխանության մարմինների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր,

2. իրավաբանների փորձագիտական եզրակացություններ, որոնք վերաբերում են կոնկրետ իրավաբանական գործերում իրավունքի նորմերի մեկնաբանմանը և կիրառմանը,

3. իրավակիրառողի և իրավունքի սուբյեկտների համար պարտադիր ճանաչված իրավաբան-գիտնականների աշխատություններ,

4. նորմատիվ-իրավական ակտեր, որոնց բովանդակությունը կազմում են իրավաբանների աշխատանքները:

Ըստ տարածության մեջ գործողության լինում են միջազգային իրավունքի և ազգային իրավունքի դոկտորիններ: Իսկ կախված բնույթից՝ առանձնացնում ենք հոգևոր և աշխարհիկ իրավական դոկտորիններ: Հոգևոր բնույթի դոկտորինները կիրառվում են մուսուլմանական երկրներում, իսկ աշխարհիկ բնույթի դոկտորինները՝ անգլոսաքսոնական իրավական համակարգի երկրներում:

Վերոգրյալի լուսի ներքո կարող ենք եզրակացնել, որ իրավական դոկտորին ասելով, հասկանում ենք իրավունքի մասին ուսմունքների, հայացքների, պատկերացումների, գաղափարների ամբողջություն, իրավական կազուսների լուծման միջոց, որն անհրաժեշտ է հասարակական պահանջների բավարարման և կայունության ապահովման համար, ստեղծվում է իրավաբան-գիտնականների կողմից և իրավունքի աղբյուրի է վերածվում՝ պետության կողմից պաշտոնապես նորմատիվ-իրավական ակտերում պարտադիր ճանաչվելով և սանկցավորվելով կամ դե ֆակտո՝ հեղինակության և իրավունքի սուբյեկտների կողմից ընդունված լինելու ուժով:

Դոկտորինի զարգացման ընթացքը կանխորոշել է իրավական համակարգերի ձևավորումը, որտեղ դոկտորինն ընկալվում և մեկնաբանվում է յուրովի, ինչն էլ հիմք է հանդիսանում նրա կիրառման առանձնահատկությունների համար: Իրավական դոկտորինը ժամանակի ընթացքում իր դիրքը զիջել է նորմատիվ իրավական ակտերին: Ներկայումս այն հիմնականում իր ամրագրումն է ստանում դատական պրակտիկայում և իրավաստեղծ գործունեությունում:

Որոշմանոգեմանական իրավական համակարգում միավորված երկրներում տարբեր կերպ է ընկալվում իրավական դոկտորինի՝ որպես իրավունքի աղբյուրի դերը և նշանակությունը: Որոշ դեպքերում ցուցաբերվում է ժխտողական մոտեցում, մեկ այլ դեպքում՝ մասամբ ամրագրվում է որոշ նորմատիվ իրավական ակտերում (հիմնականում քաղաքացիական օրենսգրքերում, երբեմն էլ՝ միջազգային իրավահարաբերությունները կարգավորելիս), իսկ մնացած դեպքերում իրավական դոկտորինը ստանում է դե ֆակտո կիրառություն դատական պրակտիկայում: Հիմնականում կիրառության դեպքերը հանդիպում են Ֆրանսիայում, Իսպանիայում:

Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում և անգլոսաքսոնական համակարգի այլ երկրներում դոկտորինը վերածվել է դոկտորին-սկզբունքի և լայնորեն կիրառվում է այս ձևով (հատկապես նախադեպի մասին դոկտորինը): Վերջին ժամանակաշրջաններում վերոնշյալ երկրների բարձրագույն դատարանների կողմից կայացված վճիռների համաձայն՝ դատարանները կարող են չհետևել այդ սկզբունքներին, այսինքն, «կապված չեն նախկինում կայացված վճիռներով», ինչի հետևանքով անգլոսաքսոնական իրավական համակարգում նկատվում է դոկտորինի դերի նվազում:

Մուսուլմանական իրավունքում իրավական դոկտորինը դեռ շարունակում է գործել՝ որպես իրավունքի առաջնային աղբյուր: Այն ունի բացառապես կրոնական բնույթ,

չպետք է հակասի իսլամի ոգուն, ինչն էլ դարձնում է դոկտորինն այս իրավունքի երկրներում «անմահ և անփոխարինելի»: Դոկտորինի և պոզիտիվ իրավունքի հարաբերակցության առումով մուսուլմանական իրավունքի երկրները բաժանվում են 2 խմբի. առաջին խմբի երկրներում նորմատիվ իրավական ակտերը չափազանց թերի են կամ իսպառ բացակայում են կամ էլ իրենց մեջ ներառում են իրավաբան-գիտնականների աշխատությունները, իսկ երկրորդ խմբի երկրներում բավական մեծ թիվ են կազմում նորմատիվ իրավական ակտերը, բայց դոկտորինն ընդունված է որպես պոզիտիվ իրավունքին հավասարազոր իրավունքի աղբյուր:

ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանում իրավական դոկտորինը համարվում է իրավունքի օժանդակ աղբյուր: Հանդիպում ենք կիրառության 2 ձև.

1. ըստ էության դոկտորինը կիրառվում է, բայց ուղղակիորեն չի մեջբերվում, իսկ հեղինակը մնում է անհայտ,

2. դոկտորինն ուղղակիորեն մեջբերվում է, նշվում է նաև հեղինակը:

Վերջին ժամանակներում հիմնականում կիրառվում է առաջին մեթոդը, ինչն ունի իր պատճառները.

1. դատարանը ցանկանում է իրեն վերագրել մեջբերված կարծիքը, որպեսզի ընթերցողը չհասկանա, թե որ աշխատությունից և ում է պատկանում տվյալ կարծիքը,

2. միջազգային պոզիտիվ իրավունքի զարգացմանը զուգահեռ նվազում է դոկտորինի դերը,

3. հատկապես պետությունների պաշտոնական գրառումները և պետությունների միջև առկա պայմանագրերը չեզոքացնում են դոկտորինալ աշխատությունների անհրաժեշտությունը,

4. դատական քննարկումների ընթացքում դատավորները համաձայնվում են մեկ գիտնականի կարծիքի հետ, սակայն «չեն համաձայնվում այդ կարծիքի իրավական հիմքի հետ», հետևաբար անհրաժեշտություն է առաջանում դիրքորոշման ամրապնդման համար նշել այդ կարծիքը՝ բաց թողնելով հեղինակին,

5. «էթիկետի խնդիրը», այսինքն, որևէ իրավաբան-գիտնականի կարծիքը դատարանի որոշման հիմքում դնելով և նրա անունը նշելով՝ կարող է հակասություն առաջանալ այլ իրավաբանների միջև, ովքեր ժամանակին արտահայտել են նման կարծիք, սակայն բավականաչափ ձանաչվածություն չունենալու հետևանքով զրկվել են «մեջբերվելու» հնարավորությունից [14]:

Վերջին տասնամյակում նկատվում է իրավական դոկտորինի դերի նվազում: Պատճառը ոչ թե դոկտորինի կիրառման անհրաժեշտության բացակայությունն է, այլ միջազգային պոզիտիվ իրավունքի զարգացումը, պետությունների կողմից արված պաշտոնական գրառում-մեկնաբանությունների, պետությունների միջև միջազգային պայմանագրերի առկայությունը, որը չափազանց նեղացնում է դոկտորինի կիրառման շրջանակները՝ հասցնելով այն հիմնականում հասկացությունների բառարանի «մակարդակի»: Չնայած այդ հանգամանքին՝ դատարանի պրակտիկայում հանդիպում են դեպքեր, որտեղ իրավական դոկտորինը կիրառվում է՝ որպես «պատմական մեծ արժեք», իրավունքի բացի լրացման միակ միջոց և այլն:

ՀՀ-ում վերջին ժամանակներում իրավաբան-գիտնականների մեծ մասը ձանաչում է իրավական դոկտորինը՝ որպես իրավունքի իրավաբանական աղբյուր, որի վրա դատարանները կարող են հղում կատարել: Միևնույն ժամանակ իրավակիրառ պրակտիկայում հաճախ է տրվում այն հարցը, թե արդյոք ՀՀ դատավորները դատական ակտերում իրավունք ունեն հիշատակել գիտական-իրավական դիրքորոշումները, արդյոք դրա համար օրենքով պետք է նախատեսել որևէ օրենսդրական հիմք (լիազորող նորմ) [15]:

Դոկտորինի կիրառումը դատական պրակտիկայում դիտարկում ենք երկու տեսանկյունից. առաջինի դեպքում դատարանի որոշման հիմքում է դրվում տվյալ գործով

ներգրավված (իրավունքի ոլորտում) փորձագետ-մասնագետի դիրքորոշումը, իսկ երկրորդի դեպքում կողմերից մեկի դիրքորոշման կամ դատարանի որոշման մեջ՝ դատավորի կողմից հղում է արվում գիտական աշխատությունների վրա: Շատ դեպքերում թե՛ դատավորի, թե՛ դատավարության կողմերից մեկի դերում կարող է հանդես գալ իրավաբան-գիտնականը, ով իր դիրքորոշումն արտահայտելիս դիմում է օրենքի դոկտրինալ մեկնաբանության (վերլուծության) օգնությանը: Մասնագետի արտահայտած դիրքորոշումն ունի խորհրդատվական բնույթ և պարտադիր չէ կիրառման համար, քանի որ, ըստ էության, կողմերի՝ մասնագետի կարծիքին դեմ արտահայտվելու դեպքում դատավորը չի առաջնորդվում դրանով:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնականում հանդիպում են դոկտրինի կիրառման հետևյալ դեպքերը. դոկտրինը՝ որպես հասկացությունների բառարան, միջազգային իրավունքի դոկտրինալ աղբյուրները, հռոմեական իրավունքի դոկտրին-սկզբունքները, օրենքների դոկտրինալ մեկնաբանությունները:

Միջազգային փորձն ուսումնասիրելիս նկատվում է, որ երբեմն օրենսդրական մասնաձեռնությամբ օժտված են լինում իրավաբան-գիտնականները, ովքեր ներգրավված են լինում իրավաստեղծ գործունեության ողջ գործընթացում (բոլոր փուլերում՝ սկսած նորմատիվ իրավական ակտի նախաձեռնությունից մինչև ընդունումը):

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, այս ինստիտուտը, կարելի է ասել, գտնվում է դեռ վաղ ձևավորման փուլում, ինչը պատճառ է քաղաքական գործողների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պատշաճ տեսական հիմնավորման, իրավաբանական տեխնիկայի կանոնների պահանջների անտեսման: Ավելին, անգամ տեսական հիմնավորման առկայության դեպքում այն նույնպես անտեսվում է թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ մարմինների կողմից, որի վառ ապացույցն են հետևյալ բոլոր օրինակները. դատական պրակտիկայում՝ իրավաբան-գիտնականների դիրքորոշումների անտեսումը, իրավաստեղծ գործունեությունում՝ հայեցակարգերի անտեսումը, ինչպես նաև հայեցակարգերի հիման վրա ձևավորված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի չընդունումը կամ ընդունման անհարկի ձգձգումները, անհիմն փոփոխությունները և այլն: Մինչդեռ, համաձայնվելով այն կարծիքի հետ, որ «անհրաժեշտ է ողջ իրավաստեղծ գործունեությունը «տանել» գիտականորեն հիմնավորված ընդհանուր մեթոդաբանությամբ կամ մեթոդաբանական հիմունքներով, որպեսզի այն բովանդակային առունով «տարբերային» կամ «անկազմակերպ» բնույթ չկրի» [16], գտնում ենք, որ անհրաժեշտ է առավել հաճախակի ներգրավել իրավաբան-գիտնականներին իրավաստեղծ և իրավակիրառ մարմինների գործունեությանը, ինչը կդարձնի այդ մարմինների աշխատանքն առավել արդյունավետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Марченко, М. Н., Источники права: учебное пособие. – М., 2018, стр. 48.
2. Սույն աշխատանքում անդրադարձ չի կատարվում «իրավունքի աղբյուր» և «իրավունքի ձև» հասկացությունների տարբերությանը, պարզապես նշվում է «իրավունքի աղբյուր» հասկացությունը:
3. Фасмер, М., Этимологический словарь русского языка: в 4-х тт. Т. 1: А-Д. М., 2004, стр. 523.
4. Васильев, А. А., Правовая доктрина как источник права: историко-теоретические вопросы: дис. ... канд. юр. наук. М., 2007, стр. 19-20.
5. Васильев, А. А., указ. соч., стр. 50.

6. Ղամբարյան, Ա., Ղալլաքյան, Լ., Իրավաբան-գիտնականների իրավունքի կիրառումը դատական վարույթի ընթացքում. իրավական կարգավորման հեռանկարները: Դատական իշխանություն, Երևան, 2016, հունիս, էջ 3:
7. Коркунов Н. М. Лекции по общей теории права. Сост., автор вступ. ст., коммент. А. Н. Медушевский. М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010, стр. 345-346.
8. Радько, Т. Н., Теория государства и права в схемах и определениях: учебное пособие. – М., 2015, стр. 166.
9. Кашанина, Т. В., Юридическая техника: учебник. – М., 2007, стр. 389.
10. Хропанюк, В. Н., Теория государства и права: учебник для бакалавров. – М., 2015, стр. 282-283.
11. Տե՛ս, Васильев, А. А., указ. соч., стр. 50.
12. Давид Р., Жоффре-Спинози К. Основные правовые системы современности. – М.: Международные отношения, 1999, стр. 106.
13. Տե՛ս, Васильев, А. А., указ. соч., стр. 38-39.
14. Michael Peil, Scholarly writings as a Source of law: A Survey of the Use of Doctrine by the International Court of Justice. – Cambridge Journal of International and Comparative Law (1)3. 2012, p. 144-146.
15. Տե՛ս, Ղամբարյան, Ա., Ղալլաքյան, Լ., նշվ., աշխ., էջ 5:
16. Ն.Ա. Ապիյան, Գ.Հ. Սաֆարյան, Զ.Հ. Հակոբյան, Պետության և իրավունքի տեսության հիմնահարցեր: Ուս. ծեռնարկ, Երևան, 2001, էջ 394:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Իրավական դոկտրինը՝ որպես իրավունքի աղբյուր.
հասկացությունը, նշանակությունը և տեսակները
Անի Սարգսյան

Իրավունքի աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում իրավական դոկտրինը, որի դերի, նշանակության և իրավունքի այլ աղբյուրների հետ հարաբերակցության վերաբերյալ իրավաբանական գրականությունում չկա հստակ, միասնական մոտեցում: Սույն գիտական հոդվածը նվիրված է դոկտրինի՝ որպես իրավունքի աղբյուրի ուսումնասիրմանը, դերի և նշանակության պարզաբանմանը, իրավաբանական գրականությունում դոկտրինի վերաբերյալ տեսակետերի վերլուծությանը:

РЕЗЮМЕ

Правовая доктрина как источник права:
понятие, значение и виды
Ани Саргсян

Ключевые слова: источник права, правовая доктрина, научное толкование, юристы-ученые.

Особое место среди источников права занимает правовая доктрина, к роли, значению и взаимоотношению с другими источниками права которой нет четкого, единого подхода в юридической литературе. Данная научная статья посвящена изучению доктрины как источника права, выяснению ее роли и значения, анализу взглядов относительно доктрины в юридической литературе.

SUMMARY

Legal Doctrine as a Source of Law: Concept, Significance and Types
Ani Sargsyan

Keywords: source of law, legal doctrine, scientific interpretation, lawyers-scientists.

Legal doctrine has a special place among the sources of law, and there is no certain, unified approach in legal literature about its role, significance and correlation with other sources of law. The objective of this scientific article is the research of doctrine as a source of law, the clarification of its role and significance, the analysis of views concerning doctrine in legal literature.